

Հրապարակվում է Հայաստանի Հանրապետության
պետական կառավարման ակադեմիայի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գ ի տ ա կ ա ն հ ա ն դ ե ս

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Նախագահ՝ ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար

Խ ո Ր Ի Ր Դ ի ա ն դ ա մ ն ե Ր՝

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի.գ.դ., պրոֆ.,
ՀՀ սահմանադրական
դատարանի նախագահ
ՀՐԱՆՈՒՅ ՀԱՎՈՐՅԱՆ
Ի.գ.դ., պրոֆ.,
ՀՀ սփյուռքի նախարար

ՄԱՆՎԵԼ ԲԱԴԱԼՅԱՆ

Տ.գ.թ., ՀՀ քաղաքացիական
ծառայության խորհրդի
նախագահ

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Տ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս, Հայաստանի
պետական տնտ. համալսարան

ՄԱՐԳԱՐԻՏ ԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Նախագահի
աշխատակազմի կադրերի
վարչության պետ

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ի.գ.դ., պրոֆ., Երևանի
պետական համալսարան

ԱՇՈՏ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ի.գ.դ., պրոֆ.,
ՀՀ սահմանադրական
դատարանի անդամ

ՀԱՅԿ ՄԱՐԳՍՅԱՆ

Տ.գ.դ., պրոֆ., Երևանի
պետական համալսարան

ԱՐԱՄԻ ՄԱՐԳՍՅԱՆ

Տ.գ.դ., պրոֆ., Հայաստանի
պետական տնտեսագիտական
համալսարան

ԷՂՈՒՎԱՐԴ ՕՐԴՅԱՆ

Տ.գ.դ., պրոֆ., Տնտեսագի-
տության և կառավարման
ինստիտուտի տնօրեն

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ք.գ.դ., պրոֆ., ՀՀ պետական
կառավարման ակադեմիա

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

Ք.գ.դ., Երևանի պետական
համալսարան

ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հ.գ.դ., պրոֆ., Երևանի
պետական համալսարան

ՈՒՌԲԵՆ ԱՐՈՒՋՈՒՄՅԱՆ

Հ.գ.թ., պրոֆ., ՀՀ պետական
կառավարման ակադեմիա

ՖՐԱՆԿ ՎՈՒՄ ԾԵՐՈՒՆՅԱՆ

Ի.գ.դ., պրոֆ., Հարավային
Կալիֆորնիայի համալսարանի
Սոլ Փրայս հանրային քաղաքա-
կանության դպրոց,
Լոս Անջելես, ԱՄՆ

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի.գ.դ., պրոֆ., Մարդու իրա-
վունքների եվրոպական դատա-
րանի դատավոր Հայաստանից,
Ստրասբուրգ, Ֆրանսիա

ԱԼԱՆ ՄԱՍԼՈՎ

Փ.գ.դ., պրոֆ., Կանադայի Կարլտոն
համալսարանի հանրային քաղա-
քականության և կառավարման
դպրոց, Օտտավա, Կանադա

ՓՈԼ ԲՐԱՈՒՆ

Փ.գ.դ., պրոֆ., Կանադայի
Դալհուսի համալսարանի
պետական կառավարման
դպրոց, Հալիֆաքս, Կանադա

ԼԵՍԼԻ ՓԱԼ

Փ.գ.դ., պրոֆ., Կանադայի
Կարլտոն համալսարանի
հանրային քաղաքականության
և կառավարման դպրոց,
Օտտավա, Կանադա

ԱՆԱՏՈՒԻ ԺՈՒՐԱՎԼՅՈՎ

Հ.գ.դ., պրոֆ., Ռուսաստանի
գիտությունների ակադեմիայի
հոգեբանության ինստիտուտ,
ՌԳԱ իսկական անդամ, ՌԿԿԱ
ակադեմիկոս, Մոսկվա, ՌԴ

ՎԱԼԵՐԻ ԲԱԿՈՒՄԵՆԿՈ

Պետ. կառ. դոկ., պրոֆ.,
Ուկրաինայի մունիցիպալ
կառավարման ակադեմիա,

ԿԻԼ, Ուկրաինա

ՎԱԼԵՐԻ ՏԵՐՏԻՉԿԱ

Պետ. կառ. դոկ., պրոֆ.,
Ուկրաինայի Նախագահին
առընթեր պետական
կառավարման ազգային
ակադեմիա, ԿԻԼ, Ուկրաինա

ՎԻՏԱԼԻ ՆԵԿՐԱՍՈՎ

Տ.գ.դ., պրոֆ., ՌԴ Նախագահին
առընթեր ժողովրդական տնտե-
սության և պետական ծառայու-
թյան ակադեմիա, Հարավ-
ուսաստանյան ինստիտուտ-
մասնաճյուղ, Դոնի Ռոստով, ՌԴ

ԻԳՈՐ ԳԱՆԶԵՐԵՆՈՎ

Ֆիզմաթ. գ.դ., պրոֆ.,
Բելառուսի ազգային
ակադեմիայի գիտական
կադրերի պատրաստման
ինստիտուտ, Մինսկ, Բելառուս

ՍԵՐԳԵՅ ԿԱԼԵՆՋՅԱՆ

Տ.գ.դ., պրոֆ., ՌԴ Նախագահին
առընթեր ժողովրդական տնտե-
սության և պետական ծառայու-
թյան ակադեմիայի կորպորատիվ
կառավարման բարձրագույն
դպրոց, Մոսկվա, ՌԴ

Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԵՆ ԼՈՔՅԱՆ

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Վ Ա Ր Չ Ա Ն Ի

ԽԱԶԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՋՅԱՆ (պատասխանատու քարտուղար), ԳՈՒ ՉԱՏԻՆՅԱՆ, ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐՉՈՅԱՆ (խմբագիր),
ԹԵՐԵԶԱ ԽԵՉՈՅԱՆ, ԳՐԻՇԱ ԳՍՊՈՅԱՆ, ԱՐՄԵՆ ԵԶԵԿՅԱՆ, ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆ

*Рекомендовано к печати согласно решению ученого
совета Академии государственного управления
Республики Армения*

ПУБЛИЧНОЕ УПРАВЛЕНИЯ

Н а у ч н ы й ж у р н а л

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: АРМЕН ГЕВОРКЯН

Руководитель аппарата Президента Республики Армения

Члены совета:

ГАГИК АРУТЮНЯН

Д.ю.н., проф., председатель
Конституционного суда
Республики Армения

ГРАНУШ АКОБЯН

Д.ю.н., проф.,
Министр диаспоры
Республики Армения

МАНВЕЛ БАДАЛЯН

К.э.н., председатель Совета
гражданской службы
Республики Армения

ЮРИЙ СУВАРЯН

Д.э.н., проф., академик НАН РА,
Армянский государственный
экономический университет

МАРГАРИТ АЗАРЯН

Нач. управления кадров
аппарата Президента
Республики Армения

ВАГЕ СТЕПАНЯН

Д.ю.н., проф., Ереванский
государственный университет

АШОТ ХАЧАТРЯН

Д.ю.н., проф., член
Конституционного суда
Республики Армения

АЙК САРКИСЯН

Д.э.н., проф., Ереванский
государственный университет

АГАСИ САРКИСЯН

Д.э.н., проф., Армянский
государственный
экономический университет

ЭДУАРД ОРДЯН

Д.э.н., проф., директор
Института экономики и
управления

МАРИАМ МАРГАРЯН

Д.п.н., проф., Академия
государственного управления
Республики Армения

ГАРИК КЕРЬЯН

Д.п.н., проф., Ереванский
государственный университет

ГРАНТ АВАНЕСЯН

Д.п.н., проф., Ереванский
государственный университет

РУБЕН АГУЗУМЦЯН

К.п.с.н., проф., Академия
государственного управления
Республики Армения

ФРАНК ВРАМ ЗЕРУНЯН

Д.ю.н., проф., Сол Прайс школа
публичной политики, Универ-
ситет Южной Калифорнии,
Лос Анджелес, США

АРМЕН АРУТЮНЯН

Д.ю.н., проф., Судья
Европейского суда по правам
человека от Армении,
Страсбург, Франция

АЛЛАН МАСЛОВ

Д.ф.н., проф., Школа публичной
политики и управления,
Карлтонский университет,
Оттава, Канада

ПОЛ БРАУН

Д.ф.н., проф., Школа
государственного управления,
Далхауси университет,
Галифакс, Канада

ЛЕСЛИ ПАЛ

Д.ф.н., проф., школа публичной
политики и управления,
Карлтонский университет,
Оттава, Канада

АНАТОЛИЙ ЖУРАВЛЕВ

Д.п.с.н., проф., Институт
психологии Российской
академии наук, действ. член
РАН, академик РАО, Москва,
Российская Федерация

ВАЛЕРИЙ БАКУМЕНКО

Доктор наук по государственному
управлению, профессор,
Академия муниципального
управления, Киев, Украина

ВАЛЕРИЙ ТЕРТЫЧКА

Доктор наук по государственному
управлению, профессор, Нацио-
нальная академия государствен-
ного управления при Президенте
Украины, Киев, Украина

ВИТАЛИЙ НЕКРАСОВ

Д.э.н., проф., Российская
академия народного хозяйства
и государственной службы при
Президенте РФ, Южно-
Российский институт-филиал,
Ростов-на-Дону, Российская
Федерация

ИГОРЬ ГАНЧЕРЕНКО

Д.ф.-м.н., проф., Институт
подготовки научных кадров
Национальной академии наук
Беларуси, Минск, Беларусь

СЕРГЕЙ КАЛЕНДЖЯН

Д.э.н., проф., Высшая школа
корпоративного управления
Академии народного хозяйства
и государственной службы при
Президенте РФ, Москва,
Российская Федерация

Главный редактор: АРСЕН ЛОКЯН

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

ХАЧАТУР БЕЗИРДЖЯН (ответственный секретарь), ГОР ЧАТИНЯН, ЛАВРЕНТИЙ МИРЗОЯН (редактор),
ТЕРЕЗА ХЕЧОЯН, ГРИША ГСПОЯН, АРМЕН ЕЗЕКЯН, АННА ГУЩЯН

PUBLIC ADMINISTRATION

Scientific journal

EDITORIAL COUNCIL:

Chairman: ARMEN GEVORGYAN

Head of Administration of the President of the RA

Members of the Council:

GAGIK HARUTYUNYAN

Doctor of Sciences (Law), Professor,
President of the Constitutional
Court of the Republic of Armenia

HRANUSH HAKOBYAN

Doctor of Sciences (Law), Professor,
RA Minister of Diaspora

MANVEL BADALYAN

PhD (Economics), Chairman of
the Civil Service Council of the RA

YURI SUVARYAN

Doctor of Sciences (Economics),
Professor, Full Member
(Academician) of National Academy
of Sciences of the RA, Armenian
State University of Economics

MARGARIT AZARYAN

Head of the Human Resource
Department of the Office
to the President of the RA

VAHE STEPANYAN

Doctor of Sciences (Law), Professor,
Yerevan State University

ASHOT KHACHATRYAN

Doctor of Sciences (Law), Professor,
Member of the Constitutional
Court of the RA

HAYK SARGSYAN

Doctor of Sciences (Economics),
Professor, Yerevan State
University

AGHASI SARGSYAN

Doctor of Sciences (Economics),
Professor, Armenian State
University of Economics

EDWARD ORDYAN

Doctor of Sciences (Economics),
Professor, Director of the Institute
of Economics and Management

MARIAM MARGARYAN

Doctor of Sciences (Political Science),
Professor, Public Administration
Academy of the RA

GARIK KERYAN

Doctor of Sciences (Political Science),
Professor, Yerevan State
University

HRANT AVANESYAN

Doctor of Sciences (Psychology),
Professor, Yerevan State
University

RUBEN AGHUZUMTSYAN

PhD (Psychology), Professor,
Public Administration Academy
of the RA

FRANK VRAM ZERUNYAN

Doctor of Jurisprudence (Law),
Professor, Sol Price School of
Public Policy, University of
Southern California;
Los Angeles, USA

ARMEN HARUTYUNYAN

Doctor of Sciences (Law), Professor,
Judge of the European Court of
Human Rights in respect of
Armenia, **Strasbourg, France**

ALLAN MASLOVE

PhD, Professor
School of Public Policy and
Administration, Carleton
University; **Ottawa, Canada**

PAUL BROWN

PhD, Professor
School of Public Administration,
Dalhousie University;
Halifax, Canada

LESLIE PAL

PhD, Professor
School of Public Policy and
Administration, Carleton
University; **Ottawa, Canada**

ANATOLIY ZHURAVLEV

Doctor of Sciences (Psychology),
Professor, Institute of Psychology of
the Russian Academy of Sciences,
Academician Russian Academy of
Sciences, Academician of the RAE,
Russian Federation

VALERY BAKUMENKO

PhD, Professor
Academy of Municipal
Administration; **Kyiv, Ukraine**

VALERIY TERTYCHKA

PhD, Professor
National Academy of Public
Administration at the President of
the Ukraine; **Kyiv, Ukraine**

VITALY NEKRASOV

PhD, Professor
Russian Academy of National
Economy and Public Service at
the President of Russian
Federation, South-Russian
Institute-Branch; **Rostov-in-Don,
Russian Federation**

IGOR GANCHERENOK

PhD, Professor, Researchers'
Training Institute of National
Academy of Sciences of Belarus
Minsk, Belarus

SERGEY KALENDZHYAN

Doctor of Sciences (Economics),
Dean of Graduate School of
Corporate Management of the
Academy of National Economy
and Public Service at the President
of RF, **Russian Federation**

Editor-in-chief: ARSEN LOKYAN

EDITORIAL BOARD

**KHACHATUR BEZIRJYAN (executive secretary), GOR CHATINYAN, LAVRENTI MIRZOYAN (editor),
TEREZA KHECHOYAN, GRISHA GSPOYAN, ARMEN YEZEKYAN, ANNA GHUSHCHYAN**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանրային կառավարում	10
ԱՇՈՏ ԹՈՎՄԱՍՅԱՆ	
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	10
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ	
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՈՒՀԱԿԱՆ ԶԵՎԱԶԱՓԻ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	16
Տնտեսագիտություն (Կառավարում)	24
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ	
ՀՀ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	24
ԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ	
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ՝ Ֆ. ԹՐՈՍՓԵՆԱՐՍԻ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ	33
ԱՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ	
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ	41
ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ	
ԵԼԻԶԱՎԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԵՎ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՆՈՐՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	50
Իրավագիտություն	60
ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈ-ԶԱԿՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ. ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԶԱՓԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ (ՌԵՑԵՊՏԻԱ), ԹԵ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՏԵՂԱՅՆԱՅՈՒՄ	60
ԱՐՄԱՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ	
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՅՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՅՈՒՄ.....	67
ԻՆՆԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ	
ՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ ԱԶՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	74
ԱՐՄԵՆ ԵԶԵԿՅԱՆ	
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....	82

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ	
ԳՈՀԱՐ ԽԱՌԱՏՅԱՆ	
Ձեռնարկասիրական գործո՞ւնեցողության հրավազան երաճեսի՞քները.....	92
ԽԱՉԱՏՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ	
Անկաս ղասսական իճեսանո՞ւթյան կաՅԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	
2015 թվականի ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....	100
ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ	
«ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ	
ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ.....	107

Ք ա ղ ա ք ա գ ի տ ու թ յ ու ն 115

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ	
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ	
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ.....	115
ՄԱՆԵ ԱԹԻԿՅԱՆ	
ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱՔԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ..	125
ՎԱՐԴԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ	
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ԿԵՐՊԱՓՈԽՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	134
ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆ	
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ.....	143

Հ ո գ ե ք ա ն ու թ յ ու ն 151

ՆԱՆԵ ԶԵՅՆԱԼՅԱՆ	
«ԱՆՁՆԱՅԻՆ ԱՐԺԵՔ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՁԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	151
ՍԻՐՎԱՐԴ ԲԵԶԻՐՋՅԱՆ	
ԱՆԻ ԱՐԻԱՀԱՄՅԱՆ	
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄՈՏԻՎԱՅԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՀԱՅ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄՈՏ.....	161
ՆՈՒՆԵ ԱՂԱՍՅԱՆ	
ՍՊԱՌՈՂԻ ՎԱՐՔԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.....	168
ԱՐԹՈՒՐ ՄԻՐՉՈՅԱՆ	
ԶՐՈՒՅՑԻ ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԿԱՊԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ	
ՀՈԳԵՔԱՆԻ ԽՈՀԱԾՈՒԹՅԱՆ (ՈՒՅԼԵՔՍԻԱՅԻ) ՀԵՏ.....	175
ԼԻԼԻԹ ԲԴՈՅԱՆ	
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՄՔԻ	
ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ	
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	182

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի պրոֆեսոր*

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի հայցորդ*

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՐ ԵՎ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՆՈՐՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Տնտեսական աճի տեմպի ավելացման հիմնահարցը կարևորվում է Հայաստանի Հանրապետության համար: Օրինակ՝ 2016 թվականին ՀՆԱ-ի աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 0.2 %, ինչը հանրապետության առջև ծառայած խնդիրների լուծման տեսանկյունից անբավարար է: Այդ պատճառով էլ ներկայումս ՀՀ կառավարությունն առաջնահերթ նշանակություն է տալիս ներդրումների ընդգրկմանը և դրանց ծավալների ավելացմանը:

Հոդվածում ուսումնասիրվել և բացահայտվել են տնտեսական աճի և կուտակման նորմայի միջև եղած կապը, ինչպես նաև ներդրումների ավելացման նոր աղբյուրներն ու ուղղությունները:

Հիմնաբառեր. տնտեսական աճ, կուտակման նորմա, հիմնական կապիտալ, մարդկային կապիտալ, ներդրումների աղբյուր, խնայողություններ:

Տնտեսական աճի 2017-2020 թվականների համաշխարհային ցուցանիշները գերազացնելու սոցիալ-տնտեսական կարևոր հնչեղություն և նշանակություն ունեցող խնդիրը ներկայումս դրված է ՀՀ կառավարության կողմից: Այդ խնդրի լուծման նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրապետության տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման մայրուղին տնտեսական աճի բարձր տեմպերն են, որը նաև երկրի առջև կանգնած բազմաթիվ «հիվանդությունների» բուժման համադարմանն է: Իսկ ի՞նչ ճանապարհներով և միջոցներով է հնարավոր հասնել առաջադրված նպատակին: Այս խնդիրը ներկայումս գտնվում է և առաջիկայում էլ գտնվելու է ոչ միայն քաղաքագետների, ժողովրդագիրների և մյուս մասնագետների ուշադրության կենտրոնում, այլև, առաջին հերթին, դարձել է տնտեսագետների ուսումնասիրությունների հիմնական թեման: Ինչպես ողջ հանրությունը, այնպես էլ ՀՀ կառավարությունը նրանցից սպասում է կոնկրետ և առարկայական առաջարկություններ զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածների համար:


Տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման հիմնական (իսկ հաճախ նաև՝ միակ) ուղին, երկրի զարգացման մոդելից անկախ (նույնիսկ անկախ այն հանգամանքից՝ երկիրը զարգացող է, թե զարգացած, բռնապետություն է, թե ժողովրդավարական), այն է, թե ինչպես և ինչպիսի արագությամբ կհաջողվի արագացնել ներդրումների աճը առաջին հերթին տնտեսության հիմքը կազմող նրա հիմնական «բջիջներում»՝ ձեռնարկությունների և կազմակերպությունների հիմնական և մարդկային կապիտալներում: Սրանք երկրի տնտեսության այն «հանգույցներն» են կամ տեղամասերը, որոնք կարող են ապահովել տնտեսական աճը, այն լուրմոտիվներն են կամ շղթայի հիմնական օղակները, որոնք կարող են շարժել և առաջ մղել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը: Այլ կերպ ասած՝ ներդրումները ձեռնարկություններում և մարդկային կապիտալում այն հենման կետերն են, որոնք ամբողջապես կարող են փոփոխել իրերի վիճակը ինչպես տնտեսությունում, այնպես էլ հասարակության բոլոր շերտերում՝ դրանով իսկ հանրության և նրա յուրաքանչյուր անդամի մեջ առաջացնելով դրական սպասումներ և ակնկալիքներ, ինչն այնքան կարևոր է իշխանությունների կողմից ձեռնարկվող միջոցառումներին և գործողություններին հուսալու և հավատալու համար: Սա թերևս կարևոր է հատկապես այն տեսանկյունից, որ մարդկանց որոշակի շերտեր լքում են երկիրը և աշխատանք փնտրում «օտար ափերում»: Դրա փոխարեն նրանք և նրանց ընտանիքները՝ մնալով հանրապետությունում, կպահպանեն շուկայի գնողունակությունը՝ նպաստելով դրա ծավալների պահպանմանը, իսկ մյուս կողմից, իրենց դրամական միջոցները թողնելով հանրապետությունում, կստեղծեն ներդրումների լրացուցիչ հնարավորություններ, ինչը կարևոր է ներդրումային դաշտի պահպանման և զարգացման տեսանկյունից: Նկատենք նաև, որ երկրի ներսում (անկախ այն բանից՝ այն արտադրական, թե սոցիալական բնույթի կամ նշանակության ոլորտում է կատարվում) ծախսված յուրաքանչյուր դոլարի կամ դրամի ներդրումը բազմարկիչի (մուլտիպլիկատորի) էֆեկտի հաշվին բազմապատկելու է ներդրումների ազդեցությունը երկրի և նրա քաղաքացիների կյանքի բոլոր բնագավառների վրա:

Ինչպես հայտնի է, ներդրումների աղբյուրը խնայողություններն են, իսկ վերջիններիս համար կարևոր է, որ հասարակությունն ավելի շատ կուտակի: Կուտակային միջոցների դերը երկրի զարգացման գործում կարելի է համեմատել այն ներուժի հետ, որը երկիրն առաջ է տանում զարգացման ճանապարհով: Ըստ որում, որքան մեծ են երկրի կուտակման հնարավորությունները ինչպես բացարձակ արժեքով, այնպես էլ հարաբերական ցուցանիշների մեծությամբ (հիմնական ցուցանիշը համախառն կուտակման մեծության հարաբերությունն է ՀՆԱ-ի մեծությանը, որը

հայտնի է «կուտակման նորմա» անվանումով), այնքան մեծ են տնտեսական աճի արագացման հնարավորությունները: Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում կուտակման նորման 2004-ին կազմել է 21.9% (474.6 մլրդ դրամ), 2005-ին՝ 30.5% (683.3 մլրդ դրամ), 2006-ին՝ 35.0% (953.7 մլրդ դրամ), 2007-ին՝ 37.8% (1189.9 մլրդ դրամ) [5, էջ 16], 2008-ին՝ 40.9% (1458.9 մլրդ դրամ), 2009-ին՝ 34.7% (1089.2 մլրդ դրամ), 2010-ին՝ 32.9% (1137.3 մլրդ դրամ), 2011-ին՝ 27.3% (1030.6 մլրդ դրամ) [3, էջ 17], 2012-ին՝ 25.3% (1080.6 մլրդ դրամ), 2013-ին՝ 22.3% (1014.9 մլրդ դրամ), 2014-ին՝ 20.9% (1007.8 մլրդ դրամ), 2015-ին՝ 20.8% (1049.5 մլրդ դրամ) [1, էջ 15] (տե՛ս **Գծանկար 1-ը**):

Բերված տվյալներից հետևում է, որ ՀՀ-ում համախառն կուտակման նորման 2004-2015 թվականներին իր գագաթնակետին է հասել 2008-ին՝ կազմելով 40.9% (1458.9 մլրդ դրամ), որից հետո այն ունեցել է անկման միտում՝ նվազելով շուրջ երկու անգամ և 2015-ին կազմելով 20.8% կամ 1007.8 մլրդ դրամ:

Այլ կերպ ասած՝ համախառն կուտակման նորմայի աճը նկատելիորեն հետ է մնացել ՀՆԱ-ի աճի տեմպից, ինչն էլ հանգեցրել է համախառն կուտակման նորմայի նվազեցմանը:



Աղբյուրը՝ [1], [3], [5]:

Գծանկար 1. ՀՀ համախառն կուտակման նորման 2004-2015 թթ.

Կազմենք նաև ՀՀ ՀՆԱ-ի և համախառն կուտակման նորմայի աճի տեմպերը և այդ աճին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճի տեմպը ներկայացնող աղյուսակը:

**ՀՀ ՀՆԱ-ի և համախառն կուտակման նորմայի աճի տեմպերի հարաբերակցությունը
2005-2015թթ.**

N	Ցուցանիշները	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	Շրջայական համաթիվը 2005-2015թթ.
1	ՀՆԱ-ի աճը նախորդ տարվա նկատմամբ, %	113.9	113.2	113.7	106.8	85.9	102.1	104.7	107.2	103.3	103.6	103.0	169.9
2	Համախառն կուտակման աճը նախորդ տարվա նկատմամբ, %	144.0	139.6	124.8	122.6	74.7	104.4	90.6	104.9	93.9	99.4	103.8	220.9
3	Տնտեսական 1% աճին բաժին ընկնող համախառն կուտակման չափը, գործակից (2:1)	1.26	1.23	1.10	1.18	0.87	1.02	0.87	0.98	0.91	0.96	1.01	1.30

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է [5, էջ 16-19], [3, էջ 15-18], [1, էջ 15-18]:

Աղյուսակ 1-ի տվյալներից հետևում է, որ 2005-2008 թթ. (մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն ընկած ժամանակահատվածը, որը ՀՀ-ում իր ազդեցության գագաթնակետին հասավ 2009 թվականին (ՀՆԱ-ն նվազեց 14.1%-ով)) ՀՆԱ-ի 1% աճի ապահովման համախառն կուտակման գործակիցը եղել է բավական բարձր և, որպես կանոն (2005թ., 2006թ., 2007թ.), ապահովել է ՀՆԱ-ի բավական բարձր աճի տեմպ (թեև 2008-ի համախառն կուտակման աճը նախորդ տարվա համեմատ եղել է բավական բարձր՝ 122.6%), սակայն 2008-ի սկզբներից սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն սկսել է իր բացասական ազդեցությունը թողնել ՀՀ տնտեսության վրա: Վերը նշված ճգնաժամի ազդեցությունը շարունակվել է հաջորդ տարիներին, ինչը դրսևորվել է համախառն կուտակման գործակցի ցածր մակարդակով, ինչպես նաև 2011-2014 թթ. այդ գործակցի 1-ից ցածր մեծությամբ:

Ու թեև 2015 թվականին այդ գործակիցը նախորդ տարվա նկատմամբ աճել է, սակայն այդ աճը եղել է աննշան: Ընդհանուր առմամբ, 2005-2015 թվականներին ՀՆԱ-ի շրթայակապ համաթվի մեծությունը կազմել է 169.9%, համախառն կուտակման աճինը՝ 220.9%, ինչը նշանակում է, որ նշված ժամանակահատվածում ՀՆԱ-ի 1%-ն ապահովվել է համախառն կուտակման 1.3 գործակցով:

Երկրի բանկային համակարգում բնակչության ավանդները նույնպես որոշակի պատկերացում են տալիս բնակչության խնայողությունների չափերի և դրանց շարժի վերաբերյալ: Ակներև է, որ այսօրվա խնայողությունները վաղվա ներդրումներն են, և խնայողություններն են որոշում ապագա ներդրումների ծավալներն ու դրա օգտագործման կամ ծախսման ուղղությունները: Ժամանակին համընթաց՝ ավելացել է ՀՀ բնակչության ավանդների գումարը: Այսպես, 2005 թ. այն կազմել է 96 273 մլն դրամ, ավանդի միջին չափը՝ 144 554 դրամ, իսկ ավանդի միջին չափը բնակչության մեկ շնչի հաշվով՝ 29 922 դրամ: Այդ ցուցանիշները 2008-ին կազմել են համապատասխանաբար՝ 201 939 մլն դրամ, 209 480 դրամ, 62 365 դրամ [4, էջ 86], 2011-ին՝ համապատասխանաբար 483 592 մլն դրամ, 375 460 դրամ, 160 056 դրամ, 2015-ին՝ համապատասխանաբար 1 005 959 մլն դրամ, 447 093 դրամ, 33 476 դրամ [1, էջ 98]: Այսինքն՝ 2005-2015թթ. այդ ցուցանիշներն ավելացել են համապատասխանաբար 1044.9%-ով, 309.3%-ով, 1121.2%-ով: Նկատենք նաև, որ եթե 2005 թվականին բանկային համակարգում ՀՀ բնակչության ավանդները կազմել են

ՀՆԱ-ի 4.3%-ը (2242.9 մլրդ դրամ), ապա 2008-ին՝ 5.5%, համապատասխանաբար (3646.1 մլրդ դրամ) [5, էջ 16], 2011թ.-ին՝ 12.8%, (3779 մլրդ դրամ) [3, էջ 17], 2015-ին՝ 20.0% (5032.1 մլրդ դրամ) [1, էջ 15]:


Ինչպես տեսնում ենք, բանկային համակարգում բնակչության ավանդներն զգալի են և ինչը զարգացման կարևոր գործոն է: Ըստ էության, 2015 թվականին բնակչության ավանդների (1005.0 մլրդ դրամ) և երկրի համախառն կուտակման (1045.9 մլրդ դրամ) մեծությունները գրեթե հավասարվել են:

Այս ամենով հանդերձ, հատկապես վերջին տարիներին ներդրումները հիմնական կապիտալում և մարդկային կապիտալում նվազել են՝ 2008թ. 50.5%-ից 2015թ. հասնելով ՀՆԱ-ի 33.1%-ի: Ըստ որում, հիմնական կապիտալի բաժինը ՀՆԱ-ի մեջ 2008-ին կազմել է 39.8%, 2015-ին՝ 20.8%, իսկ մարդկային կապիտալինը՝ համապատասխանաբար 10.7% և 12.3%: Վիճակագրական տվյալների [1, էջ 247-248, 3, էջ 251-252, 4, էջ 251-252, 6, էջ 226-227, 7, էջ 424, 483, 8, էջ 16, 254-255, 457, 9, էջ 462, 507] վերլուծությունից հետևում է, որ 1999-2015թթ. ընթացքում ՀՀ ՀՆԱ-ն ավելացել է 509.6%-ով, վերջնական սպառման ծախսերը՝ 429.3%-ով՝ 1999թ. 108.2%-ից (ինչն աննախադեպ երևույթ է, քանի որ այդ թվականին հանրապետությունը 8.2%-ով ավելի շատ է սպառել, քան ստեղծվել է ՀՆԱ, և այդ միտումը շարունակվել է նաև 2000 թվականին (8.9%), 2001-ին (4.8%), իսկ 2015-ին հասել է 91.2%-ի, որը համաշխարհային համանման ցուցանիշների համեմատությամբ (70-75%, իսկ Չինաստանում՝ ընդհուպ 60%) զգալիորեն մեծ տեսակարար կշիռ է: Վերջնական սպառման ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 1999-2008թթ. աստիճանաբար նվազել է և 2008-ին հասել է իր նվազագույն մեծությանը (81.8%), որից հետո՝ 2009-2013թթ., այն նորից սկսել է ավելանալ և իր գագաթնակետին է հասել 2013 թ. (99.0%), իսկ 2014 թվականից կրկին նվազել է՝ 2015-ին հասնելով 91.2%-ի: Պետք է նկատել, որ վերջնական սպառման ծախսերի առյուծի բաժինը ձևավորել են տնային տնտեսությունները, որոնց բաժինը 1999-ի 96.0%-ից 2015-ին հասել է 73.7%-ի: Ըստ որում, 1999-2008 թվականներին այն ունեցել է նվազման միտում (2008-ին կազմել է 71.4%), իսկ 2009-2013թթ.՝ աճել է (2013-ին հասել է 86.7%-ի): Վերջնական սպառման ծախսերի կազմում զգալի են նաև պետական հիմնարկների ծախսերը, որոնք 1999-2008 թվականներին 11.9%-ից հասել են 10.3%-ի, իսկ այնուհետև սկսել են բարձրանալ և 2015-ին հասել են 13.1%-ի:

1999-2015 թվականներին համախառն կուտակման ծախսերն ավելացել են 577.2%-ով, այսինքն՝ ավելի արագ տեմպով, քան ՀՆԱ-ն: Համախառն կուտակման բաժինը 1999-2008թթ. աճել է՝ 18.3%-ից հասնելով 40.9%-ի (բարձրագույն կետը), որից հետո այն սկսել է նվազել և 2015-ին հասել է 20.8%-ի, ինչն ավելի մոտ է 2001 թվականի ցուցանիշին: Համախառն կուտակման միջոցներն օգտագործվում են հիմնական կապիտալի համախառն կուտակման և նյութական շրջանառու միջոցների պաշարների ֆինանսավորման համար: 1999-2008 թթ. հիմնական կապիտալի համախառն կուտակումը 16.4%-ից (շարքի ամենացածր ցուցանիշն է) 2008-ին հասել է 39.8%-ի (շարքի ամենաբարձր ցուցանիշն է), որից հետո այն գրեթե երկու անգամ «անկում» է ապրել և 2015-ին հասել է 20.8%-ի՝ դրանով իսկ ռեսուրսներ չթողնելով նյութական շրջանառու միջոցների պաշարների ավելացման համար և զրկելով կազմակերպություններին գործունեության համար անհրաժեշտ շրջանառու միջոցներից:

ՀՀ ՀՆԱ-ի օգտագործման ցուցանիշների վրա զգալի ազդեցություն է թողնում ապրանքների և ծառայությունների զուտ արտահանումը, որը 1999 թվականի 29.0%-ից 2005-ին հասել է 14.4%-ի (անկումը կազմել է ավելի քան երկու անգամ): 2007-ից այն սկսել է աճել և 2009-ին հասել է 27.5%-ի: Սկսած 2010 թվականից՝ այն նվազել է և 2015-ին հասել է 12.2%-ի (անկումը կազմել է ավելի քան 225.4% (տե՛ս նաև **Գծանկար 2-ը**):

Այսպիսով, ՀՀ ՀՆԱ-ի փոքր ծավալը, այդ ծավալի կառուցվածքում վերջնական սպառման ծախսերի բարձր տեսակարար կշիռը, ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման բացասական մեծությունը լուրջ, երկարաժամկետ սահմանափակումներ են համախառն կուտակման և, հետևաբար, կուտակման նորմալի մակարդակը բարձրացնելու ճանապարհին: Նման պայմաններում անխուսափելի է դառնում հանրապետությունում ընդլայնված վերարտադրության ապահովման համար արտաքին փոխառությունների ձեռքբերումը, ինչը, սակայն, երկրորդ պլան չի մղում երկրի ներքին հնարավորությունների օգտագործումը և ակտիվների օգտագործման արդյունավետության բարձրացումը:



Աղբյուրը՝ [10, էջ 280], [8, էջ 259], [5, էջ 231], [3, էջ 250], [2, էջ 247], [1, էջ 250]:

**Գծանկար 2. ՀՀ համախառն ներքին արդյունքի օգտագործման կառուցվածքը (ընթացիկ գներով)
ՀՆԱ-ի նկատմամբ, %-ով**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, 607 էջ:
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2015, 601 էջ:
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, 598 էջ:
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2011, 624 էջ:
5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009, 589 էջ:
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2008, 589 էջ:
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2007, 547 էջ:
8. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2004, 582 էջ:
9. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2003, 581 էջ:
10. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2002, 578 էջ:

АШОТ МАРКОСЯН

*Профессор Академии
государственного управления РА*

ЕЛИЗАВЕТА МАРКАРЯН

*Соискатель Академии
государственного управления РА*

ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ И НОРМА СБЕРЕЖЕНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Проблема увеличения темпов экономического роста наиболее остро стоит в Республике Армения. К примеру, в 2016 году рост ВВП по сравнению с предыдущим годом составил всего 0.2%, который не удовлетворяет решению проблем экономического роста. Принимая во внимание данные обстоятельства Правительство РА важнейшее значение придает привлечению новых инвестиций и увеличению их объёмов.

Авторы изучили и выявили причинно-следственную связь между экономическим ростом и нормой сбережений, в статье также предлагаются новые источники и направления привлечения инвестиций и увеличения их объёмов.

Ключевые слова: экономический рост, норма сбережений, основной капитал, человеческий капитал, источник инвестиций, сбережения.

ASHOT MARKOSYAN

*Professor of the
Public Administration Academy of the RA*

ELIZABETH MARKARYAN

*Correspondence Degree Seeker of the
Public Administration Academy of the RA*

ECONOMIC GROWTH AND NORMS OF SAVINGS IN THE REPUBLIC OF ARMENIA

The problem of economic growth is most critical in the Republic of Armenia. For example, the GDP growth in 2016 in comparison with the previous year was only 0.2%, which is not satisfying to solve economic growth problems. The Government of the RA attaches the highest priority to attracting new investments and increasing the volume of investments.

The authors studied and revealed the causal relationship between economic growth and the savings rate, the article also suggests new sources and directions for attracting investments and increasing their volumes.

Keywords: economic growth, saving rate, fixed capital, human capital, sources of investments, savings.

Ներկայացվել է խմբագրություն 11.04.2017 թ.

© «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրություն

Հիմնադիր «ՀՀ պետական կառավարման ակադեմիա»
(անվանումը և պետական ոչ առևտրային
գրանցման համարը)՝ կազմակերպություն, 264.210.05880
Գրանցված է՝ ՀՀ արդարադատության նախարարության
պետական ռեգիստրում 18.09.2003 թ.,
Գրանցման համարը՝ 211.200.00236
Պեղական գրանցման
վկայականի համարը՝ 01Մ 000236
Հասցեն՝ 0028, ք. Երևան, Կիևյան 8
Հեռախոս՝ 010 269 259
Էլ. փոստ՝ journal@paara.am
Համացանցային <http://paara.am/science/science-journal/>
հասցեն՝

Չափսը՝ 70x100^{1/16}, թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,
ծավալը՝ 11.94 տպ. մամուլ, տպաքանակը՝ 300:
Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը
(հասցեն՝ Երևան, Արշակունյաց 2)

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ՀՀ ԲՈՀ)
սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների
հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի
պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

« Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն »
Երևան